Հուշաթերթ քվեատուփը և ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը վերահսկող հանձնաժողովի անդամի համար

Նախատեսված է այն ընտրատեղամասերի համար, որտեղ քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային միջոցների կիրառմամբ։

Վրաստանի Խորհրդարանի 2024 թվականի հոկտեմբերի 26-ի ընտրություններ

Տվյալ ռեսուրսը պատրաստվել է ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսումնական կենտրոնի կողմից։

Հուշաթերթ-հրահանգը օժանդակ ռեսուրս է հանձնաժողովի անդամի կողմից գործառույթին համապատասխան ընտրողին որակյալ ծառայություն տրամադրելու համար։

ARCHEVNEBI 2024

- Ընտրողին բացատրե՛ք քվեաթերթիկը ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ ներմուծելու կարգը.

«Քվեաթերթիկը հատուկ շրջանակ-ծրարի միջոցով այնպես ներմուծե՛ք սարքի մեջ, որ քվեաթերթիկի այն մասը, որի վրա գտնվում է փորձնական շրջանը, հայտնվի ներքևում: Շրջանակ-ծրարը թեթև պահե՛ք, որպեսզի սարքը հեշտությամբ ընդունի քվեաթերթիկը: Սպասե՛ք մինչև սարքի էկրանին հայտնվի «Ձեր ձայնը ստացվել է» հաղորդագրությունը և միայն դրանից հետո դո՛ւրս եկեք քվեարկության շենքից»:

Ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ քվեաթերթիկը ներմուծելը



Քվեաթերթիկը հիմնական քվեատուփի մեջ ներմուծելը հաստատող հաղորդագրություն

Հիշե՛ք տվյալ կարգի պահպանումը պայմանավորում է ընտրության գաղտնիություն նույնիսկ այն դեպքում, եթե սարքը վերադարձնի քվեաթերթիկը:

- Եթե ընտրողը չի կարողանում հատուկ շրջանակ-ծրարի միջոցով սարքի մեջ ներմուծել քվեաթերթիկը, օգնե՛ք նրան:

Հիշե՛ք

Եթե ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքը չընդունի և վերադարձնի քվեաթերթիկը, հնարավոր է այն կրկին տեղադրել ձայների հաշվման հատուկ էլեկտրոնային սարքի մեջ: Եթե քվեաթերթիկը կրկին վերադարձվի, ապա այն կհամարվի փսասված: Նման դեպքում դիմե՛ք հանձնաժողովի նախագահին, նրա հանձնարարությամբ գրանցում իրականացնողը պարտավոր է փսասված քվեաթերթիկը փոխարինել նորով:

- Քվեաթերթիկը հիմնական քվեատուփի մեջ զետեղելուց հետո ընտրողին ցուցո՛ւմ տվեք հատուկ շրջանակ-ծրարը դնել դրա համար հատկացված սեղանի վրա և լքել ընտրատեղամասը:

Հիշե՛ք:

Քվեարկության գործընթացն առանց էլեկտրոնային միջոցների կիրառման շարունակելու դեպքում ընտրողին բացատրե՛ք հիմնական քվեատուփի մեջ քվեաթերթիկի զետեղման կարգը.

«Քվաթերթիկը գաղտնիության սկզբունքի պահպանմամբ, ծալված վիճակում զետեղե՛ք հիմնական քվեատուփի մեջ»:

- Ապահովե՛ք արդեն օգտագործված հատուկ շրջանակ-ծրարների փոխանցում ընտրողների գրանցում իրականացնողին: